

Էլեկտրոնային ուսուցման կազմակերպում

Էլեկտրոնային ուսուցումը կրթություն ստանալու ժամանակակից միջոցներից է, որի իրականացման ընթացքում կիրառվում են ավանդական և ինովացիոն մեթոդներ, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաների վրա հիմնված բազմաֆունկցիոնալ գործիքներ և ծրագրային ապահովումներ:

Ինտերակտիվ գործիքների միջոցով իրականացվող ուսուցումն ունի նմանություններ դասավանդման դասական եղանակներին՝ պարապմունքի հաջող անցկացման հիմքերը նույնն են, անկախ այն տեխնոլոգիաներից, որոնք օգտագործում է դասավանդողը:

Հեռավար ուսուցումը ենթադրում է սովորողների և դասավանդողների միջև կապը ժամանակի և տարածության մեջ: Էլեկտրոնային ուսուցման միջավայրեր ապահովող շատ ծրագրային լուծումներ կան: Դրանց շարքում կան թե՛ կոմերցիոն նպատակով և թե՛ ազատ օգտագործման համար նախագծված համակարգեր:

Էլեկտրոնային ուսուցման առավելություններից է՝ կրթություն ստանալու համեմատաբար ցածր ինքնարժեքը, էլեկտրոնային գրականության, առաջադրանքների և այլ նյութերի արագ հասանելիությունը, ուսուցման մեթոդների ճկունությունը, նյութերի համատեղ և բազմակի օգտագործումը, սովորողների մեծ լսարանի հետ աշխատելու առանձնահատկությունը, դասընթացների մասնակիցների և դասավանդողների աշխարհագրական դիրքից և ժամանակից անկախությունը, բարդ նյութերի ընկալողունակության բարձրացումը, նրանց սոցիալական հավասարության ապահովությունը և այլն:

Էլեկտրոնային ուսուցմում իրականացնելու համար անհրաժեշտ են հետևյալ պայմանները՝

- **Դասավանդողի և սովորողի համար՝** համակարգիչների, տեխնիկական այլ միջոցների և ցանցի առկայություն, սարքավորումներից օգտվելու կարողություն,
- **Դասավանդողի համար՝** դասընթաց մշակելու կարողություն, վարելու հմտություն, դասավանդման համար անհրաժեշտ էլեկտրոնային նյութերի առկայություն

Էլեկտրոնային կրթության զարգացման հիմնական ուղղությունները

- հեռավար ուսուցման համակարգի կատարելագործում և շահագործում,
- ուսուցման գործընթացում կիրառվող SCS գործիքների և ծրագրային լուծումների տեղայնացում և օգտագործում,
- կրթության էլեկտրոնային բովանդակության շարունակական հարստացում,
- հեռավար ուսուցման դասընթացների կազմակերպման հմտությունների վերապատրաստում ուսուցիչների համար,
- Մենթոր դպրոցների ցանցի ստեղծում և հեռավար ուսուցման համակարգերի գործածամամբ ուսուցման կազմակերպում,
- հեռավար ուսուցման համակարգերի միջոցով օլիմպիական խմբակներ, դասընթացների իրականացում,
- Եվրամիության Իթվինինգ Պլյուս ծրագրի շարունակականության ապահովում,
- դպրոցների վիրտուալ համայնքի ձևավորում, SCS կիրառմամբ համագործակցության և ուսուցման գործընթացի կազմակերպման ազգային ծրագրի իրականացում՝ գոյություն ունեցող կրթական էլեկտրոնային ռեսուրսների օգտագործմամբ (Հայկական կրթական միջավայր, պաշարների շտեմարան, կրթական ֆորում և այլն),

Մենթոր դպրոցների ցանցի ստեղծում և հեռավար ուսուցման համակարգերի գործածամամբ ուսուցման կազմակերպում

Հաշվի առնելով 2016-2017 ուստարվա առաջին կեսին տարբեր դպրոցներում իրականացված հեռավար դասընթացների փորձի վերլուծությունը՝ կրթական գործընթացի շարունակականության ու արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է երկու դպրոցների (փոխանցող և ստացող) միջև շարունակական համագործակցության ապահովում: Դպրոցները պետք է պատասխանատու լինեն ողջ գործընթացի համար՝ ուսման կազմակերպումից մինչև գիտելիքի ստուգումը: Մենթոր դպրոցների ցանցի ստեղծման և հեռավար ուսուցման համակարգերի գործածամամբ ուսուցման կազմակերպման ծրագիրը նպատակ ունի ակտիվացնել միջդպրոցական համագործակցությունը, լրացնել մանկավարժական կադրերի բացը սահմանամերձ կամ փոքր դպրոցներում, աջակցել ուսուցիչների մասնագիտական կարողությունների բարձրացմանը և ապահովել հավասարապես որակյալ կրթություն ՀՀ բոլոր աշակերտների համար:

Սույն ծրագրով նախատեսվում է մենթորություն իրականացնել երկու խումբ դպրոցների համար.

- դպրոցներ որտեղ բացակայում են ընտրված առարկաների գծով ուսուցիչները,
- դպրոցներ, որոնց ուսուցիչները ուսուցման կազմակերպման և դասավանդման արդյունավետության բարձրացման աջակցության կարիք ունեն,

Սույն ծրագիրը նախատեսվում է իրականացնել երկու փուլով՝ պիլոտային և լայնածավալ: Պիլոտային փուլը կիրականացվի մինչև 2017թ. ուսումնական տարվա սկիզբը: Պիլոտային փուլի նպատակն է փորձարկել էլեկտրոնային ուսուցման կազմակերպման մեթոդաբանությունը, մշակել համապատասխան մեխանիզմներ հետագայում արդյունավետ կիրառման նպատակով, ճշգրտել ֆինանսատնտեսական մեխանիզմները և խնդիրները՝ հետագա ֆինանսավորման կայուն հիմքեր ձևավորելու նպատակով:

Մենթոր դպրոցների ցանցի ձևավորման ժամնակացույց

Ժամանակահատված	Աշխատանք	Իրականացնող	Ակնկալվող արդյունք
2017թ. հունվար	Մենթոր և մենթի դպրոցների ընտրություն	ՀՀ ԿԳՆ, ԿՏԱԿ	Մենթոր և վերջիններիս կցված դպրոցների առկայություն (10+30)
2017թ. հունվար	Ընտրված դպրոցների մասնագետների վերապատրաստում	ԿՏԱԿ, Մենթոր դպրոցներ	Ընտրված դպրոցների մասնագետները ունեն համապատասխան հմտություններ՝ հեռավար համակարգի միջոցով դարձնաթացների կազմակերպմանը աջակցելու և իրականացնելու համար
2017թ. և շարունակական	Հայկական կրթական միջավայր պորտալի կատարելագործում, ներկայացվող նոր պահանջներին համապատասխան կրթական պաշարների շտեմարանի բարելավում, նոր նյութերի տեղադրում	ԿՏԱԿ, ՀՀ ԿԳՆ, ԿԱԻ, դպրոցներ, ԿՏԱԿ	Հայկական կրթական միջավայր պորտալում ներկայացված են էլէկտրոնային ռեսուրսների հղումները, որոնք կարելի է օգտագործել հեռավար դասընթացներ կազմակերպելիս: Պաշարների շտեմարանում նյութերը դասկարգված են և շտեմարանը համապատասխանում է օգտագործողների կարիքներին:
2017թ. հունվար-փետրվար	Դպրոցների անհատական կարիքների վերհանում և անհատական կրթական ուղիների մշակում	ՀՀ ԿԳՆ, ԿՏԱԿ	Ուսուցման մեկնարկ
2017թ. փետրվար	Գործընթացի առաջին միջանկյալ վերլուծություն:		Մենթոր-դպրոցների միջև փորձի փոխանակում և ծրագրի շտկում

2017թ. մարտ- մայիս	Հեռավար դասընթացների իրականացում	Մենթոր և մենթի դպրոցներ, ԿՏԱԿ	
2017թ. մայիս- հունիս	Աշակերտների գիտելիքի ստուգում: Ծրագրի ինքնագնահատում՝ և մենթորների և մենթիների կողմից	ԿԳՆ, ԿՏԱԿ, մենթոր և մենթի դպրոցներ	
2017թ. հունիս- հուլիս	Պիլոտային ծրագրի արդյունավետության գնահատում և ընդլայնված ծրագրի ներդրման մշակում: Փորձարկված էլ.նյութերի և գործիքների արդյունավետության գնահատում օգտագործողների կողմից	ԿԳՆ, ԿՏԱԿ, ԿԱԻ	
2017թ. օգոստոս- սեպտեմբեր	Նոր մենթոր և մենթի դպրոցների ընտրություն: Մասնագետների վերապատրաստում: Էլ.նյութերի և գործիքների կատարելագործման մեկնարկ	ԿԳՆ, ԿՏԱԿ, ԿԱԻ	
2017թ. սեպտեմբեր	Հեռավար ուսուցման ծրագրի ընդլայնված ներդրում	ԿԳՆ, ԿՏԱԿ, ԿԱԻ	Մենթոր և վերջիններիս կցված դպրոցների առկայություն (50+150)

